Այսպիսով, կապիտալիզմի ընդհանուր ճնշմամբ երկրորդ տասյը բնորոշվեց նաև գասակարգային պայքարի խիստ սրմամբ շահագործողների և շահագործվողների միջև:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՊԵՆԱՌԱՄԻՆՈՒ (ԵՐՐՈՐԿ) ԷՏԱԳԸ

Կապիտալիզմի ընդհանուր ճնշմամբ երրորդ տասյի տունձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա ստացումը կապված չէ համաշխարհային պատերազմի և կապիտալիստական սխտեմից նոր սկզբների ու տերիտորիաների սկսատման հետ: Այդ երկուսն էլ համաշխարհային երկու հակադիր սխտեմների խաղաղ գոյակցության և տնտեսական մրցության պայմաններում, սոցիալիզմի ուժերի հաղթանակի ու ամբարկնման, կապիտալիզմի ուժերի թուլացման ու անկման, իմպերիալիզմի բոլոր հպատկությունների խիստ սրման պայմաններում, երբ կոմունիզմի կասեցման փոխարեն արտակարգ ուժեղացել է կապիտալիզմի քայքայման պրոցեսը:

Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1960 թ. մոսկովյան խորհրդակցության հայտարարության մեջ ասված է, որ կապիտալիզմի ընդհանուր ճնշմամբ նոր էտապի «...լուրահատկությունն այն է, որ ստալացել է ոչ թե համաշխարհային պատերազմի կապակցությամբ, այլ երկու սխտեմների մրցության ու պայքարի, սոցիալիզմի օգտին ուժերի հարաբերակցության ավելի ու ավելի փոփոխման, իմպերիալիզմի բոլոր հակասությունների խիստ սրման պայմաններում, աշխարհի պայմաններում, երբ խաղաղ գոյակցության իրազորման և ամբարկնման համար խաղաղասեր ուժերի հաղթող իմպերիալիստների թուլացումը ընդհանուր խաղաղությունը, զեմոկրատիայի, ազգային ազա-

տազուման և սոցիալիզմի համար ժողովրդական լայն մասսաների պայքարի վերելքի պայմաններում¹։

Կապիտալիզմի քնդհանուր ճշմարտամի երկրորդ էտապում՝ սոցիալիզմի և կապիտալիզմի ուժերի հարաբերակցության մեջ կատարված տեղաշարժերը համաշխարհային նոր պատերազմը կանխելու հնարավորություններ ատելծեցին։

Իմպերիալիզմի դրառաջանում պատերազմների անխուսափելիության դրույթը Վ. Ի. Լենինն առաջ քաշեց պատմական այնպիսի իրադրության մեջ, երբ իմպերիալիզմը համապարփակ համաշխարհային սիստեմ էր, իսկ պատերազմում շահազրկումը, խաղաղության հասարակական ուժերը թույլ էին ու անկազմակերպ և, հետևաբար, չէին կարող անհրաժեշտ հակահարմուռ ապի իմպերիալիստների՝ պատերազմներ սանձազերծելու ձգտումներին։ Գործի դրույթունն այդպիսին էր առաջին համաշխարհային պատերազմից առաջ։ Այն ժամանակ պատերազմի դեմ և խաղաղության համար պայքարող ուժը՝ միջազգային պրոլետարիատը, երկրորդ Ինտերնացիոնալի լիդերները գամաճանելության պատճառով կազմալուծված էր, իսկ բանվորական շարժումը պատմական էր իմպերիալիզմի օչակիցների կողմից։ Դրույթունը բավարար չէր նաև երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ։ Այն ժամանակ խաղաղության համար պայքարող միակ երկիրը ՍՍՏՄ-ն էր, իսկ միջազգային պրոլետարիատն անկազմակերպ էր ու պատակաված։

Դրույթունն արմատապես փոխվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Անձեցին խաղաղության հասարակական ու քաղաքական ուժերը և Եվրոպայի պատերազմի կողմնակիցների ուժերը։ Մազեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը և զործավ մի հզոր ուժ։ Սոցիալիստական սիստեմի երկրները, էյնելով կապիտալիզմի և սոցիալիզմի խաղաղ գոյակցության ու տնտեսական մրցության լենինյան սկզբունքներից, հետևողականորեն պայքարում են ժողովուրդ-

ների միջև խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու համար։ Նրանք խաղաղության գործին ի սպաս են դրել իրենց հակայական նյութական ու քաղաքական հզորությունը։ Այդ երկրների վարած քաղաքականությունը, որն ուղղված է պետությունների խաղաղ համագործակցության զարգացման նպատակին, անկախ նրանց հասարակական կառուցվածքից, աշխատավոր մասսաների և խաղաղության մարտիկների հավանությունն ու աջակցությունն է վայելում ամբողջ երկրագնդի վրա։

Այնուհետև, խաղաղության ուժերն աճել են նաև նրանով, որ եվրոպայում և Ասիայում առաջացել են մի խումբ խաղաղասեր պետություններ, որոնք սազմանքն բյուկներին չմտնակելը հռչակել են որպես իրեն արտաքին քաղաքականության սկզբունք։ «Երկրագնդի վրա ստեղծվել է մի լայնածավալ խաղաղության գոտի։ Սոցիալիստական երկրների հետ միակերպ նրա մեջ է մտնում ոչ սոցիալիստական երկրների մի մեծ խումբ, որոնք արչ կամ այն պատճառով չաճազրկում էին պատերազմ սանձազերծելու մեջ»²։ Հսկայական ուժ է զարծել նաև կապիտալիստական երկրներում բանվորական շարժումը։ Աստիճանաբար աճում է բանվոր դասակարգի ազդեցությունը պատմական զարգացման ամբողջ բնիկացի վրա։ Ավիլի ու ավիլի լայն ծավալ է ստանում գաղութային ու կախյալ երկրների ազդային-ազատագրական շարժումը, որն ուղղված է գաղութակալության, իմպերիալիստական ազդեականների դեմ, հանուն ժողովուրդների խաղաղ համազորակցության։ Մազել և հզոր գործուն է զարծել խաղաղության կողմնակիցների շարժումը, որը համախմբում է հարյուր միլիոնավոր մարդկանց բոլոր երկրներում, այդ թվում նաև միլիոնավոր մարդկանց³ կապիտալիստական երկրներում։ Խաղաղ գոյակցության քաղաքականության օգտին է արտահայտվում նաև կապիտալիստական զարգացած երկրների բուրժուազիայի որոշակի մասը, որը զգաստորեն է գնահատում ուժերի հարաբերակցությունը և ժամանակակից պատերազմի ծանր հետևանքները։ Խաղաղության և ժողովուրդների ան-

¹ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը, Հուլիսի 5-րդ օրը, 1960, էջ 16—17։

² ՍՄԿ Մարզերի նախագծի, Հայրենաստ, 1961, էջ 70—71։

վտանգութեան պաշտպանութեան դրոշի տակ են հավաքվում ու համախմբվում սոցիալական զանազան խմբերի, քաղաքական ու կրօնական տարբեր հայացքներէր ներկայացուցիչները:

Այս պայմաններում արդեն գոյութիւն ունի նոր պատերազմը կանխելու ռեալ ճանապարհութիւն: Սակայն, քանի զեռ գոյութիւն ունի իմպերիալիզմը, պահպանվում է նաև պատերազմների ստաշացման անուստական հիմքեր: Մոնոպոլիաների շահերն արտահայտող միջազգային ռեակցիան փորձում է մասնաջակիս ընտելնալ զենքի կիրառումով է՛լ ավելի տպերիչ համաշխարհային պատերազմ անձազանգեծել: Բայց պատերազմների ճակատադրական անխուսափելիութիւնը ներկայումս գոյութիւն չունի:

«Այժմ կան հասարակական ու քաղաքական հզոր ուժեր, որոնք լուրջ միջոցներ ունեն, որպէսզի մտլլ շտան իմպերիալիստաների կողմից պատերազմի սանձազերծում, իսկ եթէ վերջիններս փորձեն պատերազմ սկսել,— խորտակիչ հակահարված տան ապրեսոններին, վիժեցնեն նրանց ավանտյուրիստական պլանները: Իրա համար հարկավոր է, որ պատերազմի զեմ հանդիս եկող բոլոր ուժերը լինեն զգոն ու մորիլիզացված, որպէսզի գործեն միասնական ճակատով և շթուլացնեն իրենց պայքարը խաղաղութեան պահպանման ու ամբարշտման համար»¹:

Այս զգալիփարն իր հետագա զարգացումն է ստացել նաև ՍՄԿՊ XX I համագումարի որոշումներում, 1957 թ. նոյեմբերին և 1960 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած 40-մունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցութիւնների փաստաթղթերում և ՍՄԿՊ նոր Մրազրի նախագծում:

Խաղաղ գոյակցութեան քաղաքականութիւնը համապատասխանում է բոլոր ժողովուրդների արմատական շահերին, որոնք չեն ցանկանում արյունահեղ պատերազմներ և ձգտում են կայուն խաղաղութեան: Այդ քաղաքականութիւնը նպաստում է սոցիալիզմի դիրքերի ամրապնդմանը, սոցիալիստա-

կան երկրների հեղինակութեան և միջազգային ազդեցութեան աճին: Խաղաղութիւնը սոցիալիզմի մեծ զաշնակիցն է, որովհետեւ ժամանակն աշխատում է սոցիալիզմի օգտին, կապիտալիզմի զեմ: Խաղաղութեան պայմաններում սոցիալիստական հասարակարքը էկոնոմիկայի, կուլտուրայի, դիմութեան, տեխնիկայի բոլոր բնագավառներում ավելի ու ավելի յայնորեն է բացահայտում իր առավելութիւնները կապիտալիստական հասարակարքի հանդեպ: Մտա ստաշան նոր հաջողութիւններ կրելի խաղաղութեան ու սոցիալիզմի ուժերին: Այժմ կոմունիզմի կատուցումը մարդկութեան պայծառ իղնալից զարձկ է մեր սերնդի անմիջական խնդիրը, իսկ շարտերազմները վերացնելը, երկրագնդի վրա հովանանական խաղաղութիւնը հաստատելը կոմունիզմի պատմական միտան է»²:

Իսկ որո՞նք են կապիտալիզմի բնդհանուր ճգնաժամի նոր էտապի բնորոշ գծերը:

Կապիտալիզմի բնդհանուր ճգնաժամի նոր էտապի գլխավոր հատկանիշն այն է, որ համաշխարհային սոցիալիստական սիստեմը վերածվում է մարդկային հասարակութեան զարգացման վճռական գործոնի: Համաշխարհային ասպարեզում ուժերի հարարերակցութիւնն արմատականորեն փոխվում է հօգուտ համաշխարհային սոցիալիստական սիստեմի, և համաշխարհային երկու սիստեմների պայքարի անենավճռական բնագավառում անուստական մրցութեան մեղ կապիտալիզմը խիստ նահանջում է:

Կապիտալիզմի բնդհանուր ճգնաժամի նոր էտապը բնութագրվում է նաև նրանով, որ խիստ նեղանում և իր վախճանի է մտանում իմպերիալիզմի զազութեան տիրապետութիւնը: Ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական ղնոյցիցին հուժկու հարվածների տակ քայքայվում և վերընականապիս կործանվում է իմպերիալիզմի զազութեան խաշատակ սիստեմը:

Այնուհետեւ, աչղ էտապը բնութագրվում է նաև նրանով, որ խտորեն սրվում են կապիտալիզմի բոլոր հակասութեան-

¹ ՍՄԿՊ XX համագումարի բանաձեւը, Հայպետհրատ, 1956, էջ 12—13:

² ՍՄԿՊ Մրազրի նախագիծ, էջ 71—72:

ները: Արվում է հակասությունը աշխատանքի ու կապիտալի միջև և ուժեղանում է դասակարգային պայքարը: Գլխավոր կապիտալիստական երկրների էկոնոմիկայի ռազմականացման հետևանքով ուժեղանում է կապիտալիզմի նեխումն ու պարալիզիզմը: Վերջը պատերազմի» էկոնոմիկայի բազայի վրա ուժեղանում է մոնոպոլիստական կապիտալիզմը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի փոխարկվելու պրոցեսը, որը տանում է դեպի աճող հակասությունների սրում ժողովրդական լայն մասսաների և պետական ապարատին տիրած մի բուռ մոնոպոլիաների միջև: Տնտեսական ու քաղաքական անհամաչափ զարգացման խորացման հետ կապված իմպերիալիզմի լազերի ներսում խիստ փոխվում է ուժերի հարաբերակցությունը և սրվում են հակասությունները իմպերիալիստական տերությունների միջև, որը տանում է դեպի ամբողջ կապիտալիստական սիստեմի անկայունություն: աճում ու քայքայում: Համաշխարհային ուժերի նոր դասավորման հետևանքով (համաշխարհային սոցիալիստական սիստեմի միջազգային ազդեցության ուժեղացման և իմպերիալիզմի շղթայից անբխական, աֆրիկյան և Մերձավոր Արևելքի մի շարք երիտասարդ պետությունների անջատման կապակցությամբ) միջազգային հարաբերությունների բնագավառում անշղջորեն նվազում է իմպերիալիզմի վճռական դերը: Կապիտալիզմի հակասությունների սրման հետևանքով կատարվում է բուրժուական ղեմնկրատային սահմանափակում, անցում կատարվում էր ներքինական ու ֆաշիստական մեթոդների, խռոստում է բուրժուական քաղաքականության ու զազափարախոսության ճգնաժամը:

Կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1960 թ. մտակալյան խորհրդակցությունը նշեց, «Եվրոպայի և Ասիայի երկրների՝ մարդկության մեկ երրորդն ընդգրկող մի մեծ խմբում սոցիալիզմի հաղթանակ, ամբողջ աշխարհում սոցիալիզմի համար պայքարող ուժերի հզոր աճ և սոցիալիզմի հետ տնտեսական մրցության մեջ իմպերիալիզմի դիրքերի անշղջ թուլացում, ազգային-ազատագրական պայքարի նոր հակապայքան վերելք և զազոթա-

լին սիստեմի արագացող քայքայում, համաշխարհային տնտեսության կապիտալիստական ամբողջ սիստեմի անկայունության աճ, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման և միլիտարիզմի աճի հետևանքով կապիտալիզմի հակասությունների սրում, մոնոպոլիստների և ամբողջ ազգի շահերի միջև եղած հակասությունների խորացում, բուրժուական ղեմնկրատիայի սահմանափակում, կատարվածն և իրենականական ու ֆաշիստական մեթոդների տեղեկեց, բուրժուական քաղաքականությունը և զազափարախոսության խոր նկատմամ՝ սրանք են վկայություններն այն բանի, որ կապիտալիզմի ընդհանուր նկատմամի զազացման մեջ նոր էտապ է սկսվել»:

1

Մեր ժամանակի գլխավոր բնորոշ գիծն այն է, որ աճում ու ամրապնդվում է համաշխարհային սոցիալիստական սիստեմը, այն վերածվում է մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնի: Մարդկային հասարակության պատմական զարգացման գլխավոր բովանդակությունը, գլխավոր ուղղությունը և գլխավոր արտանմանակալությունները որոշվում են համաշխարհային սոցիալիստական սիստեմով: Գա իր անմիջական արտահանությունն է զտնուցել նաև նրանում, որ անընդհատ աճում է այդ սիստեմի միջազգային դերն ու նշանակությունը, նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների բնույթի, մեթոդների ու ուղիների որոշման վրա:

Սոցիալիզմի ամբողջ սիստեմի մասշտաբով վճռական հաղթանակներ է տարել Այն ստեղծագործական շտեմոված Մոնոպոլիստների է հասել արտադրության, դիտության ու տեխնիկայի սոցիալիզմում, մարդկանց մեջ նոր, ազատ համապարժակցություն ստեղծելու գործում, որն ավելի ու ավելի մեծ շտեմով է ապահովում նրանց նյութական ու հոգևոր

1 Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հարաբերությունը, Հայփոսթառ, 1960, էջ 16:

այսհանգամանակները: Եթև 1937 թվականին այն ժամանակի միակ սոցիալիստական երկիրը՝ ՍՍՌՄ-ը զբաղվում էր երկրագնդի տերիտորիայի 16,6 տոկոսը, նրա բնակչությունը կազմում էր երկրագնդի բնակչության 7,2 տոկոսը և արտադրում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մոտ 10 տոկոսը, սակայն այժմ սոցիալիստական երկրներին բաժին է ընկնում երկրագնդի տերիտորիայի 26 տոկոսը և աշխարհի բնակչության 1/3-ին ավելին: 1959 թվականին սոցիալիստական երկրները թաղարկեցին համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ավելի քան 1/3-ը, այդ թվում՝ չուրուսի 35,5 տոկոսը, բամբակյա զործվածքեղենի 35 տոկոսը, անասունչուրի 40 տոկոսը, բարձրի 50 տոկոսը, հացահատիկի համախառն արտադրանքի 47 տոկոսը և բամբակի հումքի 40 տոկոսը¹:

1957—1959 թվականների ընթացքում սոցիալիստական երկրների արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց 37,1 տոկոսով, իսկ կապիտալիստական երկրներինը՝ 7,4 տոկոսով: Այդ նույն ժամանակամիջոցում ՍՍՌՄ արդյունաբերական արտադրանքն ավելացավ 23 տոկոսով, իսկ ԱՄՆ-ինը՝ միայն 4,6 տոկոսով: Սոցիալիստական երկրների արդյունաբերական արտադրանքի աճի տարեկան միջին տեմպը կազմեց 17 տոկոս, իսկ կապիտալիստական երկրներում՝ 3,6 տոկոս: ՍՍՌՄ արդյունաբերական արտադրանքի աճի տարեկան միջին տեմպը այդ տարիներին կազմեց 10,9 տոկոս, իսկ ԱՄՆ-ում՝ 2,3 տոկոս²:

Սովետական դիտությունը մի ամբողջ դարաշրջան բացեց համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում, տիեզերքի յուրացման սկզբը զրեց, վառ կերպով ցուցադրելով սոցիալիստական սիստեմի անսոսական ու տեխնիկական հզորությունը: Ամբողջ աշխարհը հիանում է այդ նվաճումներով, որոնք սոցիալիստական կարգի, սոցիալիս-

տական ժողովրդի ստեղծագործական հանձարի գերազանցության և հաջողությունների վառ արտահայտություններ են:

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի հաջողություններն այնպիսին են, որ 1960 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունը օրինական հայարտության զգացումով իր հայտարարության մեջ կրակացրեց.

«Այժմ ոչ միայն Սովետական Միությունում, այլև սոցիալիստական մյուս երկրներում վերացված են կապիտալիզմի ռեստավրացիայի սոցիալ-տնտեսական հնարավորությունները: Սոցիալիստական լավերի միավորված ուժերը յուրահաշյուր սոցիալիստական երկրի հուսալի կերպով երաշխավորում են իմպերիալիստական ռևակցիայի ոտքնադուրյուններին: Այսպիսով, սոցիալիստական պետությունների համախորհուրդ մի միասնական լացբերում, այդ լացերի ամապղծող միասնությունը և աներզման անող հեզությունը սպանեցում են ամբողջ սիստեմի շրջանակներում սոցիալիզմի լիակատար հաղթանակը»:

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը թեև արդեն է իր զարգացման նոր փուլը: ՍՍՌՄ-ը հաջողությամբ իրագործում է կոմունիստական հասարակարգի ծավալում կասուցումը: Սոցիալիստական սիստեմի մյուս երկրները հաջողությամբ սոցիալիզմի հիմքին են դնում, իսկ նրանցից մի բանին արդեն թեև կարողանում են զարգացած սոցիալիստական հասարակարգի կասուցման ժամանակաշրջանը:

Սա կապիտալիզմի հետ սոցիալիզմի անսոսական մրցության նոր, մեծական էտապն է: Այդ էտապում ՍՍՌՄ-ի խնդիրն է հասնել համաշխարհային արտադրության մեջ կապիտալիստական սիստեմի հանդեպ սոցիալիստական սիստեմի գերակշռության, հասարակական աշխատանքի արտադրողականությանը, բնակչության մեկ շնչին ընկնող

¹ Народное хозяйство СССР в 1959 году. стат. ежегодник. Москва, Госстатиздат, стр. 87—88 и «Правда», 30 декабря 1960 г.

² Н. С. Хрущев, За новые победы мирового коммунистического движения, ж. «Коммунист», 1961 г., № 1, стр. 10.

¹ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը, Շապհա՛րատ, 1960, էջ 21:

արտադրանքի արտադրությանը զերբազանցել տնտեսապես
տառաջել զարգացած կապիտալիստական երկրներին և ապա-
հովել աշխարհում ամենաբարձր կենսամակարդակը: ՍՍՄՄ-ն
ստատիճանաբար կրճատում է իր և ԱՄՆ-ի տնտեսական զար-
գացման մակարդակների միջև եղած ճեղքվածքը և մտադիր
է մրցության այս վճարահան էտապում հասնել և զերբազանցել
Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Եթե 1950 թվականին
ՍՍՄՄ արդյունաբերական արտադրանքը կամում էր ԱՄՆ-ի
արդյունաբերական արտադրանքի 30 տոկոսը, իսկ 1957
թվականին՝ մոտ 50 տոկոսը, ապա 1960 թ. այն կազմեց
համարյա 60 տոկոս: Հաշվումները ցույց են տալիս, որ ար-
տադրանքի ծավալի գծով ՍՍՄՄ-ը ԱՄՆ-ին կղերազանցի
1965 թվականին, իսկ բնակչության մեկ շնչին ընկնող ար-
տադրանքով՝ մոտավորապես 1970 թվականին:

Բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական
արտադրանքի արտադրությանը համաշխարհային սոցիալիս-
տական սխեմները, ամբողջությամբ վերցրած, արդեն հասել
է համաշխարհային կապիտալիստական սխեմներին:

ՍՍՄՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթ-
նամյա պլանի կատարման ու զերկատարման, ինչպես նաև
ժողովրդագրամոնոկրատական երկրների կկոնտրիկայի զար-
գացման բարձր տեմպերի շնորհիվ համաշխարհային սոցիա-
լիստական սխեմի երկրները կարողանան ամբողջ համաշ-
խարհային արդյունաբերական արտադրանքի ավելի քան
կեսը: Հետևաբար, հեռու չէ այն ժամանակը, երբ համաշ-
խարհային սոցիալիստական սխեմները նյութավան արտա-
դրության մեջ աշխարհում դուրս կգա առաջին տեղը: Կապի-
տալիզմը պարտության կմատնվի մարդկային գործունեու-
թյան այդ վճարական ոլորտում:

Միջուկային ասպարեզում համաշխարհային սոցիալիս-
տական սխեմի գերազանցումը միտմամանակ համաշխարհա-
յին կապիտալիստական սխեմի թուլացում է: Այդ երկու
պրոցեսները ակտիվ փոխադարձ ներգործության մեջ են
տեղեկում միմյանց հետ և պայմանավորված են միմյանցով:
Սոցիալիստական սխեմի գերակշռության փաստն իսկ արագաց-

նում է կապիտալիզմի քայքայման պրոցեսները, իսկ համաշ-
խարհային մաշտարով շահագործողական հասարակարդի
տնկումը խթանում է հակակապիտալիստական ուժերի ծա-
վալմանը և դրանով իսկ ուժեղացնում է նոր, աճող, վերելք
ապրող հասարակարդի դիրքերը:

Տնտեսական րևազամուտ ուժերի հարաբերակցության
փոփոխությունը բոլոր մեղացած բնազամաններում տեղի ունե-
ցող ուժերի հարաբերակցության փոփոխման հիմքն է:

Համաշխարհային զարգացման վրա սոցիալիստական
սխեմի ներգործությունը խոր և համակողմանի բնույթ
ունի Այն բնագրվում է ինչպես կոնոմիկայի, այնպես էլ քա-
ղաքականության բնազավառը: Կասկած չկա այն բանում, որ
սոցիալիստական երկրների արտադրահարաբերությունների
զարգացումն ու կատարելագործումը, այդ երկրների անուն-
ական հզորություն բարձրացումը հակայական նեղործնե-
լյուն են ունենում կապիտալիզմի քայքայման պրոցեսի վրա:
Այսպես, օրինակ, սոցիալիստական երկրների միջազգային
առևտրական հարաբերությունների զարգացումը, նրանց
տնտեսական օգնությունն և կապիտալիստական ուղիով՝ զարգացող
նոր երիտասարդ երկրներին, խորխում են աշխատանքի մի-
ջազգային բաժանման հին իմպերիալիստական Ամերի-
կաբռնչությունն սահմանափակում մոնոպոլիաների անսահմա-
նափակ իշխանությունը համաշխարհային տնտեսության կա-
պիտալիստական սխեմներում:

Համաշխարհային երկու հակադիր սխեմների տնտե-
սական մրցման մեջ սոցիալիզմի ուժերի աճումը, այդ սխեմե-
րի ամբարկեցումն ու զարգացումը հարաձուռ սոցիալիզմում
են գործում կապիտալիստական երկրների ժողովուրդների
պայքարի վրա, նոր ասպարեզ են բացում դասակարգային
պայքարի համար: Իր օրինակի ուժով համաշխարհային սո-
ցիալիստական սխեմը հեղափոխում է կապիտալիստական
աշխարհի աշխատավորների մտքերը, նրանց պայքարի է
ողնշնում բնոցնեմ կապիտալիզմի, հակայական շարժով հեղ-
ացնում է այդ պայքարի պայմանները: Հետևաբար, հասա-
րակական զարգացման ընթացքը հատուտում է լինելույն

այն կանխատեսությունը, որ հաղթանակած սոցիալիզմի կրկրենները համաշխարհային ռևոլյուցիայի զարգացման վրա իրենց դիտավոր ներդրածությունը ցույց կտան անսասական շինարարությամբ:

Սոցիալիստական երկրների վերջին տարիների նվաճումները անստուգիան, բազարականության, գիտության, տեխնիկայի, կրթության, արվեստի և այլ բնագավառներում իսկական ռևոլյուցիա առաջացրեցին կապիտալիստական աշխարհում արդյո մարդկանց պիտակցության մեջ: Բնակչության ամենալայն խավերի, հատկապես ինտելիգենցիայի, սոցիալիզմի հանդուժողունները հասցրել են արդիականության մի շարք արմատական պրոբլեմների վերաբերյալ հայացքների իսկական հեղաշրջման: Կրթական մեջ այդ հեղաշրջումը սեպ ուժ է դարձել, որովհետև նոր զաղափարներն ընդգրկում են միլիոնավոր մարդկանց: Հեռավոր և արտարակա իդեալից սոցիալիզմը դարձել է սեպ ուժ, ստացել կոնկրետ բովանդակություն: Կարելի է ասել, որ ներկայումս սոցիալիզմի իդեալները կանգնած են մարդկության հոգևոր կյանքի կենտրոնում, որովհետև դրանք են միայն ապրիս նրա դարավոր երազանքների իրազորման սեպ ծրագիրը:

Իմպերիալիստական օնպոզիտի զուգահեռաբախումները պիտակցաբար խեղաթյուրում են սոցիալիստական երկրների այդ ներգործման բնույթը, թմբիսհանրելով այն որպես սոցիալիստական երկրների կողմից կապիտալիստական երկրների ներքին պրոծերին ուղղված միջամտություն, որպես պրոծի ուրիշ երկրների ժողովուրդների վրին սոցիալիստական կարգի փաթաթման ձգտում: Բայց մարքսիզմ-լենինիզմը սկզբունքորեն մերժում է ռևոլյուցիայի արտահանման գազափարը:

Մեր դարաշրջանում կապիտալիստական երկրներում դասակարգային պայքարը ծավալվում է ոչ միայն կապիտալիզմի ներքին հակասությունների խորացման հիման վրա, այլ նաև սոցիալիստական ժողովուրդների անտեսական պրակտիկայի ալիելի ու ալիելի անող օրինակի ազդեցության տակ: Օրբեսակի ուժն այստեղ դարձել է իսկական ռևոլյուցիոն ուժ:

Սոցիալիստական երկրների տնտեսական հանդուժողունների ազդեցության տակ կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը լայն պայքար է ծավալում իր այսօրվա պահանքների իրազորման և վերջնական նպատակին հասնելու համար: Այդ պայքարում նա կապիտալիստներից խել է մի շարք զիջումներ և լրիվ վճարակներությամբ կանդնած է նորանոր նվաճումներ ձեռք բերելու դիրքերում: Սոցիալիստական սխտեմի գոյություն և զարգացման փաստը ստիպում է կապիտալիստական մոնոպոլիաներին երբեմն ալիպիսի զիջումներ կատարել բանվոր դասակարգին, որոնք կապիտալը երբեք չէր անի այլ պատմական պայմաններում: Պրոլետարների մտ ալիելի ու ալիելի է անում այն բանի դիտակցումը, որ նրանք իրենց շատ հանդուժողուններով պարտական են համաշխարհային սոցիալիստական սխտեմին:

Համաշխարհային սոցիալիստական սխտեմի տնտեսական հզորության անմասն և բուր ժողովուրդների շահերին համապատասխանող ու մարդկության մեծամասնության կողմից պաշտպանվող արտաքին բազարականություն վարելու հետևանքով անընդհատ մեծանում է այդ սխտեմի միջազգային դերն ու նշանակությունը, այն աստիճանաբար վերածվում է միջազգային հարաբերությունների վճարակն պրոծունի:

Սոցիալիստական սխտեմի հզորության անմամբ սահմանափակում է իմպերիալիստական ուժերի կողմից կապիտալիստական երկրներում աշխատավորների դասակարգային պայքարի վրա արտաքին ձեշում գործադրելու հնարավորությունը, զժվարացնում է կենտրոնալյուցիայի արտահանումը, իսկ երբեմն էլ այն դարձնում է լրիվ անհնար: Այժմ արդեն սոցիալիզմը ցույց տվել, որ ընդունակ է կասեցնել իմպերիալիզմի ագրեսիվ գործողությունները, կանխել իմպերիալիստական տերությունների ռազմական ավանսույթաները, որի վառ օրբեսակ կարող են ծառայել Եգիպտոսի, Միրիայի և Իրաքի զիպքերը: Հետևաբար, անշույլ է դարձել այն ժամանակը, երբ իմպերիալիստները հնարավորություն ունենին իրենց կամայականությամբ որոշել պատերազմ լինելու կամ

շինելու հարցը: Սոցիալիզմն օրակարգի հարց է դարձրել հասարակության կյանքից պատերազմներն իսպառ բացանելը: Խաղաղ դոյակացության սկզբունքը, որ առաջադրել է սոցիալիստական երկրները, իր լայն պաշտպանությունն է գտնում շատ երկրների կողմից, որոնք դեռևս կապիտալիզմի օրբիտի մեջ են: Կապիտալիստական երկրներում բազմապատկվում է ամբաստնությունն են այն ներքին ուժերը, որոնք կոչված են պաշտպանելու խաղաղությունն ու ազգային անկախությունը, ապահովելու դեմոկրատիայի հաղթանակը, սոցիալիզմի հաղթանակը:

Սոցիալիստական յարեհն արդեն ամբողջությամբ նվաճել է դիվանագիտական նախաձեռնությունը և այն ամուր պահում է իր ձեռքում: Հենց նա էր, որ իմպերիալիստական պետություններին հարկադրեց զբաղվել այնպիսի հարցերի քննարկմամբ, որոնք հուշում են ամբողջ մարզկությունը և գտնվում են նրա ուշադրության կենտրոնում, այն է՝ բնդհանուր և լրիվ դիմադրության ու գաղութային սխտեմի վերացման հարցերը:

Սոցիալիստական երկրների անստեղծական զարգացման ներկա մակարդակը, նրանց դիտա-տեխնիկական նվաճումները, զարգացման հեռանկարները, բարոյա-քաղաքական միասնությունը, դադափարական հաղթանակները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ «Հասել է ժամանակը, երբ սոցիալիստական պետությունները, կազմելով համաշխարհային սխտեմ, դիմել են ինտերնացիոնալ ուժ, որը հզոր ենթոդոմարյուն է ունենում համաշխարհային զարգացման վրա: Եւեան են եկել առիակաւոյւյան կարեւագոյն սրբոյնմները եւր ձեւով, խաղաւոյւյան, դեմակրատիայի և սոցիալիզմի շաների օգտին լուծելու ունալ հեւարավոբոյւյուններ»¹:

¹ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը, Հայպիտարտ, 1960, էջ 27—28:

II

Համաշխարհային սոցիալիստական սխտեմ կազմող սոցիալիստական պետությունների միջազգային ուժ գտնանալն իր վիժիարի ենթոդոմարյունն ունեցավ նաև հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական ուսույւցիտաների վերելքի վրա, ուսույւցիտաներ, որոնք հասցրեցին իմպերիալիզմի զաղութային սխտեմի քաշքայմանը, կրտիխ ենթարիցիլն դոբրեով իշխող համաշխարհային իմպերիաները:

Ազգային-ազատագրական շարժումների հզոր հարվածների տակ զաղութային խաչառակ սխտեմի փոլոզումը, նրա վերքնական ոչնչացումը կապիտալիզմի բնդհանուր անցածամի խորացման եւր էտապի ամենացալոուն արտահայտությունները մեկ է:

Այդ պրոցեսն ալիել ու ալիելի ակտիւրենն է ծավալվում ոչ միայն լայնքով, այլ նաև խորությունը: «Ազգային-ազատագրական շարժման գրեխ տակ,— ասված է խահրեղակցության հայտարարության մեջ,— գաղութային ստրիտայն սխտեմի կարծանումը սոցիալիզմի համաշխարհային սխտեմի կազմավորումից հետո իր պատմական եւանակոլոյամբ եւկրոզ եւեույրն է»:

Այժմ Ասիան, Աֆրիկան և կտտիական Ամերիկան իմպերիալիզմի դեմ մղվող ուսույւցիտան պայքարի կարեւորագոյն օբյեկտներն են: Հետպատերազմյան 15 տարիների բնթացում Ասիայում ու Աֆրիկայում առաջացան 40 եւր սուլվերեն պետություններ: Համարյա 1,5 մլրդ. մարդ ազատագրվեց զաղութային ստրիտայնից: Կտրքայի ուսույւցիտայի հաղթանակը մեծապես խթանեց կտտիական Ամերիկայի ժողովուրդների պայքարը լիակատար ազգային ազատագրության համար:

Իմպերիալիզմի զաղութային սխտեմի քաշքայման արագացնելու գործում կարեւորագոյն իրազարձություն էր եղիւոտտայի նկատմամբ իմպերիալիստական տերությունների օանձաղեթած ինտերվենցիայի կրտիխ: Ինտերվենցիան կանգնեցուց ոչ միայն իր սենխալոսիտային պահպանելու մեջ եղիւոտտայի

¹ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը, Հայպիտարտ, 1960, էջ 41:

ունենցած վճռականությունը, այլ նաև Սովետական Միության կողմից եղիպոտոսի արդարացի ազատագրական պայքարին ամեն տեսակ օգնություն ցույց տալու պատրաստակամություն ամսին արած նախազուգումը, կամավորներ ուղարկելու Չինաստանի վճռականությունը, ամբողջ սոցիալիստական լազերի պաշտպանությունը, Ասիայի, Աֆրիկայի և Հատինական Ամերիկայի բոլոր ժողովուրդների կողմից ինտերվենցիան չեղացնելու արտահայտած բողոքի գայությունը: Հատկաշեշական է այն, որ Անգլիան և Ֆրանսիան աղեն չկարողացան եղիպոտոսի դեմ պատերազմ մղելու համար մորիլիզացնել իրենց զաղութային ունեղրվները, ինչպես նրանք այդ անում էին նախկին պատերազմների ժամանակ: Այստեղ մարդկանց աչրում պարզ գրետրոլեց ուժերի նոր հարարերակցությունը:

Ընդմիջա անցյալ է դարձել այն բանը, երբ իմպերիալիզմն անարգել կերպով կարողանում էր ճնշել Արևելքի և Հարավի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Այժմ էր դեմ ՍՄՄԲ-ի և մերող սոցիալիստական լազերի երկրների՝ ազատության և անկախության համար մարտնչող ժողովուրդներն ունեն հավատարիմ ու հուսալի գաշնակիցներ: Հետևաբար, ազգային-ազատագրական շարժումների հաջողությունները մեծ չափով պայմանավորված են սոցիալիզմի հաղթանակներով և իրենց հերթին ուժեղացնում են սոցիալիզմի դիրքերը՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում:

1958 թվականի հակաիմպերիալիստական շարժումը Երաբում և հակաիմպերիալիստական լույսիները մյուս երկրներում պարզ կերպով հաստատեցին, որ կապիտալիզմի բնոհանուր ճղնամամի նոր էտապում բացառիկ բարենպաստ պայմաններ են ստեղծվել զաղութատիրության լրիվ վերացման համար:

Իմպերիալիստական ինտերվենցիայի կանխումը, սոցիալիստական պետությունների անշահախոցոր օգնությունը սղերող խթան հանդիսացան մյուս զաղութային ժողովուրդների համար Աֆրիկայում ժավալից զաղութակալությունից ազատագրման բուռն պրոցեսը, առաջադան տասնյակ նոր ինքնուրույն պետություններ: Արմատապես փոխվել է Ասիայի

դեմքը: Իմպերիալիզմի դեմ մղվող ակտիվ պայքարի ճակատ է բացվել Հատինական Ամերիկայի երկրներում:

Գաղութային երկրների ժողովուրդներն իրենց անկախությունը եվաճում են ինչպես դիվիզմ պայքարի, այնպես էլ ոչ ուզվածական ճանապարհով: Գա կախված է յուրաքանչյուր երկրի կոնկրետ պայմաններից: Հետևաբար, հիշա շեն բուրժուական և ունեղրիստական այն քաղաքագետները, որոնք պնդում են, թի իրը զաղութային ժողովուրդներին ազատություն պարգևում են զաղութատիր երկրները: Ոչ մի զաղութատիր երկիր երբեք ազատություն չի պարգևել զաղութների ժողովուրդներին և կամավոր չի հետացել իր կողմից շահաործվող երկրներից:

Եժամանակակից զաղութատիրության զլխավոր պատվարը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Իմպերիալիստները ԱՄՆ-ի զլխավորությունը կատարել ճիզ ու ջանք են թափում, որպեսզի նոր մեթոդներով և նոր ձևերով պահպանեն նախկին զաղութները ժողովուրդների զաղութային շահագործումը: Մոնոպոլիստները փորձում են իրենց ձևորում պահել տնտեսական վերահսկողության և քաղաքական աղեցնության լծակները Ասիայի, Աֆրիկայի, Հատինական Ամերիկայի երկրներում: Այդ ջանքերի նպատակն է պահպանել հին դիրքերը ազատագրված երկրների էկոնոմիկայում և նոր դիրքեր նվաճել տնտեսական օգնության պատրվաբով, ազատագրված երկրների ներդրավել ուղղմական բոկներին մեջ, այնտեղ հաստատել ուղղամղիկաատորական ուժիմներ, ստեղծել ուղղմական բազաններ¹:

Պատմական իրադարձությունների բնացրք պարզ կերպով ցույց է տալիս, որ զաղութատիրության լրիվ կործանումն անխուսափելի է: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ սեսիան Սովետական Միության առաջադրվածքում արդեն զեկարացիա է բնցունել զաղութային բոլոր երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին: Գա բոլոր պրոգրեսիվ ուժերի և սոցիալիստական բոլոր պետությունների

¹ Կոմունիստական և բանվորական պարտիսների ներկայացուցիչների ինտերգակցությունը Հայաստանից, Հայպետրուստ, 1960, էջ 42—43:

մեծ հաղթանակն է: Քայց առջևում՝ իմպերիալիստական գաղութատիրության դեմ մղվող պայքարում, ղեկնս կան ծանր ու զո՛վար խնդիրներ: Իմպերիալիստական տերությունները ոչ միայն կամավոր չեն սխրում իրենց դիրքերը, այլև, ինչպիսի ցույց են տալիս իրագործությունները Ալժիրում, Կոնգոյում, Լաոսում և աշխարհի այլ մասերում, նրանք նույնիսկ տոչորված են սեանշ վերցնելու արամադրությամբ: Քայց դրանք զուր բանքեր են: Գաղութատիրությունն իր դարն ապրել, վերջացրել է:

Ասիայի և Աֆրիկայի գաղութային լուծը թխնափած երկրների ժողովուրդները պայքար են մղում իրենց քաղաքական ինքնուրույնությունը և տնտեսական անկախությունն ստրպանդելու, գյուղացիության օգտին ազարային վերափոխուններ կատարելու, ֆեոդալիզմի մնացորդները և վերապրուկները ոչնչացնելու, իմպերիալիզմի տիրապետության տնտեսական արմատները վերացնելու, էկոնոմիկայում օտարերկրյա մոնոպոլիաները սահմանափակելու և զուրս մղելու, սոցալային արդյունաբերությունն ստեղծելու և այն զարգացնելու, բնակչության կենսամակարդակը բարձրացնելու, հասարակական կյանքը զեմոնրատակացնելու և այլ կարևոր ուղուն խնդիրներ լուծելու համար: Այդ երկրներում մասնախոր կապիտալիստական և ժանր ազարային արտադրության հետ, տնտեսական անկախության համար մղվող պայքարի պրակտիկայում, ծայել և արագ զարգանում է պետական կապիտալիզմը: Ինքը՝ կյանքը Ասիայի ու Աֆրիկայի երկտասարդ պետություններից պահանջում է էկոնոմիկայում պետական սեկտորի ստեղծում և ստրպանդում, ծանր ինդուստրիայի զարգացում: Այդ գործում նրանք հենվում են սոցիալիստական երկրների ուսլ օգնության վրա, որոնք ձեռնաու պայմաններով նրանց սարքավորում են մասակարարում, բազմակողմանի տեխնիկական օգնություն են ցույց տալիս, վարկ են տրամադրում, օգնում մասնակցուներով և այլն:

Ներկա պայմաններում սեփականության պետական-կապիտալիստական ձևերն օրչիկիվներն ուղղված են իմպերիալիստական տիրապետության դեմ և տանում են ղեպի

սոցալային էկոնոմիկայի ամրապնդում, իսկ դրա հետ մեկտեղ նաև միջազգային ասպարեզում թույլ զարգացած երկրների դիրքերի ուժեղացում: Հետևաբար, եթե նախկինում ազատագրական շարժման մեջ կենտրոնական տեղ էր գրավում քաղաքական անկախության համար մղվող պայքարը, ապա այժմ քաղաքական անկախության նվաճման հետ կապված էական նշանակություն է ձեռք բերում տնտեսական անկախության համար մղվող պայքարը:

Անկախության համար մղվող պայքարը շարժման մեջ է ղնում ժողովրդական լայն մասսաներին: Զուրբանչյուր գասակարգ հանդես է գալիս իր ծրագրով այն հարցի վերաբերյալ, թե հետագայում ղեպի ուր շարժվել, զարգացման ուղուն բնտրել:

Ժողովրդական մասսաներն ալելի են համոզվում այն բանում, որ զարավոր հետամնացության վերացման, իրենց երկրների իսկական անկախությունը ապահովող և իրենց կենսապայմանները բարելավման լավագույն ուղին ոչ-կապիտալիստական զարգացման ուղին է:

Դեմոկրատական ուժերը պայքարում են հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական, ղեմոկրատական ռեզուցիտն մինչև վերջը հասցնելու համար: Նրանք պահանջում են ուսղիկալ, ռեուլուցիտն սոցիալ-տնտեսական վերափոխուններ, աշխատավորների օգտին ազարային ռեֆորմի իրագործում, երկրի ինդուստրացում, վճռական պայքար գաղութացման նոր ձևերի և իմպերիալիստական կապիտալի ներմափանցման դեմ, պայքար բնղղմ ուղմական բուկների և ուղմական բաղաների, պայքար ղեմոկրատական կարգերի հաստատման համար և այլն: Սա սոցալային ղեմոկրատիայի պետության ուղի է: Ինչպիսի նշված է ՍՄԿՊ Նրագրում, աստեսական տեսակետից թույլ զարգացած երկրների ժողովուրդների համար լայն հոսանակարներ են բացվում սոցալային ղեմոկրատիայի պետության գոյացման ու զարգացման ուղիներում»:

Գաղութային սիստեմի արագ քայքայումը խորացնում է կապիտալիզմի բնղհանուր ճղնամամբ նրանով, որ աղատա-

զրված երկրները մերձենում, բարեկամանում են սոցիալիստական երկրների հետ, հրաժարվում են իմպերիալիստական բռնությունների մասնակցելուց, վարում են շեղորոշյալն բազաբուկանություն, սյալքարում են խաղաղության համար, պատերազմի դեմ:

Երիտասարդ ազգային պետությունների ինքնուրույն տնտեսական զարգացումը սրում է շուկաների պրոբլեմը կապիտալիստական աշխարհում, դժվարացնում է կապիտալիստական պետությունների կողմից կապիտալի արտահանման ճանապարհով այդ երկրների շահագործումը: Բոլոր իմպերիալիստական տերությունների համար կրճատվում է ներքին հակասությունների լուծման գործում իսկ զարգացած երկրներին կամ հենց միայնաց հաշվին մասներիս հնարավորությունը, ուժեղանում է սյալքարը պարսելյորների միջև, որն իր ներքին տանում է դեպի սյալակն կոշված Եսրեմտյան միասնության՝ հետագա պատակտում, հետևաբար, իմպերիալիզմի թուլացում:

Նոր իրազրության մեջ բուրժուազիան ուժեղացնում է աշխատավոր մասսաների շահագործումը, ակտիվ հարձակում է սկսում բանվոր դասակարգի կենսամակարդակի և սոցիալական նվաճումների վրա: Դեպքերի այզգիտի զարգացումն ակտիվացնում է աշխատանքի և կապիտալի միջև մղվող սյալքարը, պատճառ է հանդիսանում մոնոպոլիստական կապիտալի ճնշման դեմ լարված դասավարդային մարտեր մղելու համար: Աշխատավորական լայն մասսաների դասակարգային ինքնակոտակցության զարգացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ զաղութային սիստեմի քայքայումը և ազատագրված երկրների տնտեսական զարգացումը նեղացնում են իմպերիալիստական բուրժուազիայի կողմից պրոլետարիատի վերնախավին դեման հնարավորությունը, քայքայում են բունվորական արխտոկրատիայի ձևավորման տրնտեսական բազան:

Այդ տեսակետից հասկանչական են դեպքերը Բելգիայում: Բելգիական մոնոպոլիաները, որոնց տնտեսական դիրքերը Առնզում զգալիորեն թուլացել էին, որոշեցին կորուս-

ար փոխհատուցել բնակչությունից գանձվող հարկերի ավելացման և սոցիալական կարիքների վրա կատարվող ծախսերի զգալի կրճատման միջոցով: Մոնոպոլիաների այդ գործողությունների Բելգիայի աշխատավորների պատասխանեցին համընդհանուր գործադուլով: Այս փաստը զատկարգային սյալքարի օգակներին մեկն է, սյալքար, որն բնդրկում է ամբողջ կապիտալիստական աշխարհը և սպառնալիքի տակ դեռևս նրա զրույթությունը:

Ինքնառախնջյան հասկանալի է, որ բոլոր այդ պրոցեսներն արագացնում են իմպերիալիզմի քայքայումը և փոխում ուժերի հարաբերակցությունը հողուս սոցիալիզմի:

III

Կապիտալիզմի բնդհանուր ճգնամամի նոր էտապը նշանավորվեց նրանով, որ խիստ սրվեցին կապիտալիստական հասարակարգի բոլոր հակասությունները: Իմպերիալիզմի հակասությունների սրումը արագացրեց մոնոպոլիստական կապիտալիզմը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի վերանելու պրոցեսը: Տեղի է ունենում պետական ապրտտի և մոնոպոլիաների սերտաձուլում, մասնավոր ու պետական մոնոպոլիաների միահյուսում: Բուրժուական պետության գործունեությունը ավելի ու ավելի է ենթարկվում ֆինանսական օլիգարխիայի շահերին: Էկոնոմիկայում իշխող մոնոպոլիաներն իրենք են ենթարկում պետական ապարտար և այն օգտադրծում շահույթները բազմապատկելու և իրենց տիրապետությունն ամրապնդելու համար:

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն արտահայտվում է, նախ, նրանում, որ պետությունը գրտնում է արտադրության միջոցների սեփականատեր, երկրորդ, մոնոպոլիաներն ավելի ու ավելի են աշխատում պետական պատվերներով, երրորդ, պետությունը մոնոպոլիաներին հսկայական գումարներ է վճարում անվերազարժ փոխազույթությունների և սուբսիդիաների ձևով, ապիս է խոշոր հարկալին արտոնություններ, շրրորդ, աճում է պետության դիրք

էկոնոմիկայի կարգավորման և նրա նկատմամբ հսկողություն սահմանելու մեջ:

Պետական-մոնոպոլիտական կապիտալիզմը հակասական երևույթ է, մի կողմից այն կոչված է մտքի լիզացնելու բոլոր տնտեսական, քաղաքական և իդեոլոգիական գործոնները, որպեսզի երկարացնի կապիտալիտական կարգի գոյությունը, պահպանի և ամրապնդի մասնավոր սեփականությունն ու կապիտալիտական արտադրահարաբերությունները, մյուս կողմից այն ավելի է սրում ու խորացնում կապիտալիզմի հակասությունները:

«Ուժեղացնելով մոնոպոլիտաների դերը շխանությունը ազդի կյանքի վրա, պետական-մոնոպոլիտական կապիտալիզմը մոնոպոլիտաների ուժը միացնում է պետության ուժի հետ՝ դարձնելով միասնական մեխանիզմ կապիտալիտական կարգերը փրկելու համար, բանվոր դասակարգին շահագործելու և բնակչության լայն խավերին կողպատելու միջոցով խնայելիտական բուրժուազիայի շահույթների առավելագույն մեծացման համար»¹:

Պետական մոնոպոլիտական կապիտալիզմը արտադրության հանրայնացումը հասցնում է մի նոր, ավելի բարձր աստիճանի: Բայց այդ հանրայնացումը կատարվում է կապիտալիզմի բաղալի, շահագործման բազայի վրա, յուրացումը մնում է մասնավոր կապիտալիտական, որովհետև արտադրության միջոցները մնում են որպես մի բուն մոնոպոլիտաների մասնավոր սեփականություն: Մրդում է կապիտալիզմի հիմնական հակասությունը: Պետական-մոնոպոլիտական կապիտալիզմի պարզացումը օրյկելիվորեն նյութական բազա և ստեղծում սոցիալիտական ռեոլյուցիայի համար: Լենինը մասնանշում էր, որ պետական-մոնոպոլիտական կապիտալիզմը սոցիալիզմի նյութական նախադրությունն է:

Մոնոպոլիտաների տիրապետությունը, որոնք իրենց են ենթարկել բուրժուական տիրապետության ամբողջ հորսու-

թյունը, տանում է ղեկի աշխատավոր մասսաների շահագործման ուժեղացում, ռեակցիայի ու ռազմական բռնակալության անձարձակություն: Բնութագրելով մասսաների վեճակի վրա պետական-մոնոպոլիտական կապիտալիզմի ազդեցությունը, Լենինը գրում էր՝ «Դեպի ավելի մեծ մոնոպոլիզացիա և արտադրության ավելի մեծ պետականացում կատարված այս բոլոր քայլերը արտադրության միջոցների մասնավոր սեփականության պահպանման դեպքում անխուսափելիորեն ուղեկցվում են աշխատավոր մասսաների շահագործման ուժեղացումով, ճնշման ուժեղացումով, շահագործողների հակահարված ապու դժվարացումով, ռեակցիայի և ռազմական ղեկավարի ուժեղացումով և դրա հետ մեկտեղ անխուսափելիորեն տանում են դեպի խոշոր կապիտալիտաների շահույթի շտեմբլած աճում ի հաշիվ բնակչության մյուս բոլոր խավերի, ղեկի աշխատավոր մասսաների կեղերում կապիտալիտաներին արվող հարկով շատ տասնամյակների ընթացքում՝ փոխառությունների միլիարդացույց սոցիոսները վճարելու ձևով»²:

Իշխող մոնոպոլիտաները զավթում են և իրենց շահերի համար օգտագործում պետական սեփականությունը Իսկ կապիտալիտական երկրներում պետական սեփականությունը ծագում է պետական բյուջեի հաշվին ձեռնարկություններ, երկաթուղիներ, դինամոցներ և այլն կառուցելու հետևանքով, ինչպես նաև առանձին ձեռնարկություններ փոխհատուցում սկզբներով պետականացնելու միջոցով: Պետականացված ձեռնարկությունների կառավարման օրգանները, որպես կանոն, կազմված են խոշորագույն մոնոպոլիտաների ներկայացուցիչներից: Հաճախ պետական ձեռնարկություններ վարձակալության են արվում խոշոր ֆիրմաներին շահագրգիռ շահվեա պայմաններով: Մոնոպոլիտաները պետությունից մի շարք արտոնություններ ու առավելություններ են ստանում, օրինակ, էլեկտրաէներգիայի, երկաթուղային տրանսպորտի արտոնյալ տարիֆներ և այլն: Երբեմն պետական

¹ Վ. Բ. Լենին, Երկեր, հ. 24, էջ 331.

ձեռնարկությունները չնչին գնեցող հանձնվում են մասնավոր մարզկանցի:

Մոնոպոլիաները հարտանում են պետությունից հսկայական շահույթներ բերող պատվերներն ստանալու միջոցով: Փողոյրդական տնտեսության սազմականացումը պետական բյուջեն դարձնում է սազմական ծախսերի բյուջե: Պետությունը սազմական պատվերներ է տալիս մոնոպոլիաներին և դեռևս այդ սազմական արտադրանքը՝ Օրինակ, ԱՄՆ-ում պետությունը դեռևս է սմբողջ ազդալին արդյունքի 20,4 տոկոսը:

Պետությունը բյուջեի միջոցների հաշվին վճարումներ է կատարում դանակուն ծառայությունների համար:

Հետևարբ իմպերիալիստական պետությունը մի բուն մոնոպոլիաների համար ստեղծում է բացառիկ հարմար ու արտոնչալ շուկա, որտեղից նրանք ստանում են առասպելական շահույթներ:

Տնտեսական դոմարտայուն պայմանների դեպքում, երբ սպանում է սնանկացման վտանգը, բարձուական պետությունը մոնոպոլիաներին միջոցներ է տալիս վնասները ծածկելու համար, իսկ պետությանը տալիք հարկային պարտերը դուրս է դրում:

Այսպիսով, հարկերի ձեռվ աշխատավոր մասուններից դանձիող հսկայական դուստրները պետական բյուջեի միջոցով հստում են մոնոպոլիաների գրպալը:

Մոնոպոլիաներն իրենց ենթարկելով պետական ապարատը, աշխատավարձի «ստուցման», գործադուլունների արգելման քաղաքականություն են վարում: Նրանք նոր ձևերով՝ աշխատանքի ավելի լավով սխտանները, սպանան սարկանների գները բարձրացման և նման միջոցներով անչալի ուժեղացնում են բանվոր դասակարգի շահագործումը:

Այսպես, 1960 թվականի վերջում Անգլիայում կյանքի արժեքը 1,8 տոկոսով ավելի բարձր էր, քան 1959 թվականին, ԱՄՆ-ում՝ 1,4 տոկոսով: Շատ կապիտալիստական երկրներում կյանքի այժմյան մակարդակը նախապատերազմայինից ցածր է: Հակառակ բուրժուազիայի խոստումների, միայն առանձին

երկրներում և ժամանակավորապես և ստեղծվել լրիվ զբաղվածություն:

Պետական իշխանությունը խոչորագուն մոնոպոլիաների հորույթունն ավելացնելու համար ինքնուրույն ձեռնարկությունների ստեղծում է ենթարկվել մոնոպոլիստական մոտություններին, իսկ պատերազմի ժամանակ փակում է բազմաթիվ մանր ու միջակ ձեռնարկությունները, դրանով իսկ կախիլունն աշակցելով կապիտալի ու արտադրության համակենտրոնացմանն ու կենտրոնացմանը: Այժմ արդեն արդյունաբերության վճռական ճյուղերում (մետաղագործություն, մեքենաշինություն, հաստացաշինություն և այլն) ոչ-մոնոպոլիչացված ձեռնարկություններ համարյա չկան:

Մոնոպոլիստական կապիտալի տիրապետությունը մեծ վնաս է հասցնում ոչ միայն բանվոր դասակարգի, այլ նաև դոլդացիական ու Ֆերմերային լայն մասսաների շահերին, ստանում է դեպի նրանց աղքատացում և քայքայում: Օրինակ, ամերիկյան ֆերմերների կեմոսունները 1952—1959 թթ. բնթացքում կրճատվել են 25 տոկոսով (1952 թ. 15,3 մլրդ. դոլլարի փոխարեն 1959 թ. կազմել են 11,8 մլրդ. դոլլար): Այդ նույն տարիներին ֆերմերների թիվը կրճատվել է 776 հազարով:

Բուրժուական մամուլը շատ է խոսում իմպերիալիստական երկրներում պետության կողմից տնտեսությունը սկարդավորելու մասին: Իրականում սկարդավորումը ոչ այլ ինչ է կթի ոչ մոնոպոլիաների կողմից պետական ապարատի օգտագործում բանվորներին և դոլդացիներին կողոպտելու համար, մանր ձեռնարկությունները քայքայելու համար:

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ուժեղացումը փոխում է դասակարգային ուժերի տեղաբաշխումը և դասակարգային պայքարի պայմանները: Առաջ աշխատավորները իրենց կենսական իրավունքների համար պայքարում էին առանձին կապիտալիստների դեմ, որոնք շահագործում էին նրանց անմիջականորեն, իսկ այժմ բանվոր դասակարգի մի զգալի մասը պայքար է ծավալում պետության դեմ, որն էկոնոմիկայի անմիջական սկարդավորման միջոցով պաշտ-

պանում է մոնոպոլիաների շահերը: Այդ ցույց է տալիս բուրժուական պետության վերգասակարգային դերի մասին եզրած կեղծիքը:

Ներկա պայմաններում ավելի է բնորոշվում ու խորանում պրոլետարիատի դասակարգային պայքարը: Գործադուլային չարժույթ բնութագրվում է մասսայականությունը և հաստատամտությամբ: Այդպիսին էին, որինակ, վերջին տարիների գործադուլներն ԱՄՆ-ում, Անգլիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գանիայում, Իտալիայում և կապիտալիստական այլ երկրներում: 1960 թվականին ԱՄՆ-ում, պաշտոնական տվյալներով, տեղի է ունեցել 3300 ցույց, որոնց մասնակցել են 1400 հազար բանվորներ:

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը տանում է դեպի ոչ միայն դասակարգային անտագոնիզմի խորացում, այլ նաև դեպի բուրժուազիայի լաբերի պատահատում: Իմպերիալիզմի սկզբնական շրջանում, ինչպես ցույց է տվել Լենինը, նկատվում էր բոլոր ունեւոր դասակարգերի ընդհանուր անցում իմպերիալիզմի կողմը: Այժմյան էտապում խոշոր մոնոպոլիաների ճնշումը դառնում է ավելի ծանր ազդի բոլոր շերտերի համար: Այդ պատճառով էլ հիմնական դասակարգերի հակասության աշխատանքի և կապիտալի միջև եղած հակասության սրման հետ միասին խորանում է նաև հակասությունը մի բուռ մոնոպոլիաների և ժողովրդի բոլոր շերտերի միջև: Ավելի պարզ կերպով են դրսևորվում հակասությունները խոշորագույն մոնոպոլիստական իմպերիե, որոնք հարստանում են սպառազինությունների մրցավազքից ու երկիրը մղում դեպի վտանգավոր ավանսյություններ, և չմոնոպոլիզացված բուրժուազիայի միջև, որն ուղղակի վնաս է կրում այդ քաղաքականությունից: Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի դեմ ակտիվանում է միջին խավերի օպորտյունիստ, որոնք իրենց վրա են կրում հարկային կտրուկտի ճնշող բեռը, թանկության աճի, մոնոպոլիաների հարյուրյակի ազդեցության, ազատ կենդանեցիկայի մասնավոր նախաձեռնություն այն բոլոր ծանր հետևանքները:

Այսպիսով, մոնոպոլիաների տիրապետության վերաց-

ման մեջ կենսականորեն շահագրգռված են բանվորների դասակարգը, գյուղացուները, ինտելիգենցիան և քաղաքի ու գյուղի մանր ու միջին բուրժուազիան: Խաղաղության, դեմոկրատիայի, սոցիալական պրոգրեսի համար մղվող պայքարի լողունդի տակ բանվոր դասակարգի շուրթն են համախմբվում քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաները, մանր ու միջին բուրժուազիան և դրանով իսկ խորացնում կապիտալիզմի բնդհանուր ճգնաժամը:

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը երբեք էլ չի թեթևացնում, այլ, բնդհակառակը, զժվարացնում է պրոլետարիատի դասակարգային պայքարը, որովհետև դարգանում է միխտարիզմը, սուտիկանական կամայականությունը, ուժեղանում է սեպկցիան և դեպոտիզմը: Այդ պատճառով էլ բանվոր դասակարգի անհրաժեշտ է ուժերի նոր համախմբում, միասնական ամբարպետում, ակտիվության ու մարտունակության ուժեղացում:

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումն ավելի է ուժեղացնում կապիտալիստական էկոնոմիկայի անկայունությունը, կապիտալիզմի նեխումն ու պարզախեղմը: Ծիխա է, պետության տնտեսական միջոցառումները մի որոշ ժամանակ մեղմացնում են արտադրության անկումը ներկրում կամ նույնիսկ կենյունիտուրայի որոշ աշխուժացում են ստեղծում, բայց բուրժուական պետության տնտեսական որոշ կարգավորիչ ազդեցությունը ոչ միայն չի վերացնում, այլև սրում է մրցակցությունը մոնոպոլիստական միությունների միջև և ստատկացնում անարխիան ամբողջ կապիտալիստական տնտեսության մեջ: Արտադրության միջոցների անանավոր կապիտալիստական սեփականությունը և մարդու կողմից մարդուն շահագործելու պայմաններում բուրժուական պետությունը չի կարող պլանային կերպով վարել ծագվորդական տնտեսությունը:

Արդի համաշխարհային կապիտալիստական սխտանն բնդգրկված է անկման ու քայքայման խոր պրոցեսներով: Արդեն իր վախճանին է հասել այն ժամանակը, երբ համաշխարհային կապիտալիստական էկոնոմիկան աճում էր պա-

տերազմի հետևանքների վերացման և արտադրական ապարատի մասսայական նորացման հաշվին:

Կապիտալիստական աշխարհում խիստ սրվել է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև եղած կոնֆլիկտը: Տեխնիկայի առաջադիմության շնորհիվ արտադրողական ուժերն այնքան են զարգացել, բանվորների արտադրական որակավորումն այնքան է բարձրացել, որ նրանք այժմ ավելի ու ավելի, քան առաջ, շնչահեղձ են լինում կապիտալիստական պատշանի մեջ: Ինդյուստրիալիստական կապիտալիզմը դարձել է հասարակության զարգացման արգելակ: Գիտության և տեխնիկայի լճացման ու նեխման տենդենցը, որը մոնոպոլիաների անխուսափելի ծնունդն է, հասուկ պահեստից մեր նկատում է ներկա ժամանակաշրջանում: Գիտական և տեխնիկական շատ հայտնագործություններ, որոնք կատարվել են սրանից 25—30 տարի առաջ կամ մնացել են զրվանի տակ՝ քանի որ չեն ավելացնում մոնոպոլիաների շահույթները, կամ էլ գործազրկվել ուղղման նպատակներով: Ծառ հնարավորություններ զուր տեղը կորչում են, իսկ կիրառումն էլ հաճախ մեծ վնասներ է բերում աշխատավոր մասնաներին. կամ նրանց մի մասին դարձնում է գործազուրկ, կամ օգտագործում հենց նրանց դեմ: «Կապիտալիզմն ավելի ու ավելի մեծ շահում է խուլընդոտում ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումները սոցիալական առաջադիմության շահերի համար օգտագործելուն: Նա մարդկանց հանձարի հայտնագործություններն ուղղում է հենց մարդկանց դեմ, դրանք դարձնում է բնաշերտը պատերազմի ահեղ միջոցներ»¹:

Աշխարհում տեղի ունեցող գիտա-տեխնիկական ռևոլյուցիան չի տեղափոխում կապիտալիստական հարաբերությունների շրջանակներին մեջ և, առաջադիմով վիթխարի

հակասություններ, խորխում է կապիտալիստական սխտեմը: Եթե շինեք կապիտալիստական տիրապետությունը, ապա այժմյան ոչ-սոցիալիստական երկրների առջև կանգնած շատ խնդիրներ կարող էին լուծվել անմիջապես, իսկ շատ այլ խնդիրներին լուծման համար կրաջվեին բոլոր ուղիները:

Կապիտալիզմի նեխման ուժեղացման մասին են վկայում նաև կապիտալիստական էկոնոմիկայի անկայունության աճումը, բացառիվ ու բացառապես տնտեսական ցնցումները: Գերարտադրության տնտեսական ճգնաժամերը, որ կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցներն են, ներկա էտապում ավելի հաճախակի են դարձել:

1948—1960 թվականներին ԱՄՆ-ում, որին բաժին է բնկնում համաշխարհային արդյունաբերական արտադրանքի համարյա կեսը, դերարտադրության տնտեսական ճգնաժամերը կրկնվել են 3—4 տարի մեկ անգամ: Ընդ որում, հետպատերազմյան շրջանի ճգնաժամերը ԱՄՆ-ում ցույց են տալիս սրման տենդենց՝ յուրաքանչյուր նոր ճգնաժամ իր նախորդի համեմատությամբ ավելի խոր է: Այսպես, եթե 1948—1949 թթ. տնտեսական ճգնաժամի տարիներին ԱՄՆ-ում արդյունաբերական արտադրության անկումն 8 տոկոս էր, ապա 1953—1954 թվականներին այն կազմեց 10 տոկոս, իսկ 1957—1958 թթ.² 14 տոկոս:

ԱՄՆ-ում, այդ ամենամեծ կապիտալիստական երկրում, հուժեք բավականաչափ է, գոյություն ունեն ահպին քանակությամբ շղթածող, լծանրաբևեռված հաստոցներ ու մեքենաներ (արտադրական կարողությունների 20—30 տոկոսը), գյուղատնտեսական արտադրությունը գիտակցաբար կրճատվում է: Միխնավոր մարդիկ աշխատանքի կարող ունեն, բայց կյանքի արժեքն աճում է, որովհետև սննդի աստիակաների և հազուատի գները խիստ բարձրանում են, աճում է բնակարանային վարձը, որի հետևանքով բնակչության գնողունակ պահանջարկը կրճատվում է, հետևաբար, ապրանքները չեն վաճառվում, արտադրությունը ետ է դուր-

¹ Կոմունիստական և բանվորական գործառնների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը, Հայտնա հատ, 1960, էջ 11:

² Տե՛ս «Коммунист» ժողնայր, 1961 թ., N 2, էջ 30:

վում: Մի շարք երկրների էկոնոմիկան, անենից առաջ ԱՄՆ-ի էկոնոմիկան, դուրս է եկել կարճատև վերելքի փուլից և մտել է ճգնաժամի փուլում: ԱՄՆ-ում արտադրությունը 1960 թ. վերջին 5 ամսվա ընթացքում կրճատվել է 7 տոկոսով: Ճրգնաժամը հատկապես ուժեղ հարվածեց մետաղազործական արդյունաբերությանը: 1961 թ. հունվարի կեսերին ԱՄՆ-ի մետաղազործական արդյունաբերությունն օգտագործեց պողպատի Աուլման կարողությունները 38,6 տոկոսը: Գործազուրկների թիվը, պաշտոնական ավելաներով, 1961 թ. հունվարի կեսերին հասավ 5,5 մլն. մարդու, որը կազմում է ամբողջ աշխատուժի 7,6 տոկոսը, իսկ կիսազործազուրկների թիվը հասավ 1,5 մլն. մարդու:

1960 թ. դարձանից Անգլիայում սկսվեց արտադրության լճացում և նույնիսկ անկում: Այդ երկրի էկոնոմիկան բացահայտորեն մտնում է դժվարության շրջանի մեջ: Արդյունաբերական արտադրությունը զանգոյս է նաև ԳՅՌ-ում, Իտալիայում և մյուս կապիտալիստական երկրներում:

Գերարտադրության անոտական ճգնաժամների հետ միասին վալյուտային, բյուջետային տարերք տեսակի ճեղքնաժամերը, վճարային և առևտրական բալանսի ճգնաժամը, հումքային ճգնաժամը, աղբյուրային ճգնաժամերը քայքայում են կապիտալիստական աշխարհի էկոնոմիկան: Կապիտալիստական աշխարհը դուրս չի գալիս սոցիալիզմի ինֆլյույցիոն ճեղքնաժամի դրությունից, որը մերթ սրվում է, մերթ մեղմանում, բայց մնում է որպես ժամանակակից իմպերիալիզմի մշտական ուղեկից:

ԱՄՆ-ում սկսած վալյուտային ճգնաժամը շոշափում է ամբողջ կապիտալիստական աշխարհը: 1957 թ. ԱՄՆ-ում, Ֆորտ-Նոքսի պետական նեպոլեոնում, կար 23 մլրդ. զուլարի ոսկի, 1960 թվականի վերջին մնացել էր 17020 մլն. զուլարի ոսկի: Արտասահմանում կատարվող ուզգամական ծախսերը կյանքին 5 մլրդ. զուլարի ոսկի, ընկել է զուլարի կուրսը համաշխարհային վալյուտային շուկաներում, նրա զնդառնականությունը ընկել հասել է 47 ցենտի: Գուլարը կանգնած է դեմավաչախայի վտանգի ստրև, և Վաշինգտոնը ստիպված է

դիմել Բոննի, Փարիզի, Լոնդոնի ֆինանսական աջակցությանը: ԱՄՆ-ից սարսափելի շափերի հասնող ոսկու արտահոսքը տագնապ է առաջացրել կապիտալիստական աշխարհում: Վերջին տարիներին կապիտալիստական աշխարհի ղեկավարներն իրենց հույսները դնում են ԱՄՆ-ի վրա որպես կապիտալիզմի պատվարի, միջնաբերդի, նրա հետ են կապում իրենց դիրքերի պահպանման ու ամրապնդման հաշիվները: Բայց այդ երկիրն այժմ դարձել է տնտեսական ճգնաժամների և ամբողջ կապիտալիստական աշխարհի ցնցումների մի չուրօրինակ կենտրոն:

Կապիտալիզմի նեխումն ու պարագլխիզմն ակնառու կերպով դրսևորվում է ժողովրդական տնտեսության ազգականացման մեջ: Ազգային եկամտի մի զգալի բաժինը ծախվում է վիթխարի բանասկների պահպանման և օպատաղիանությունների արցալագրի վրա: ԱՄՆ-ում գիտնականների և ինժեներների ավելի քան 1/3-ը զբաղված է ռազմական արդյունաբերության մեջ, ոչ պակաս 5 մլն. մարդ անմիջապես և ամբողջապես կապված է սպասարկելու իրաների իրագործման հետ: Ռազմական արտադրանքը կազմում է խոշոր կապիտալիստական երկրների քնդհանուր արտադրանքի 15-20 տոկոսը: Կապիտալիստական արտադրությունը դարձել է մարդկության ոչնչացման ղեկի արտադրություն, իսկ կապիտալիզմն ամբողջապես՝ հակամարդկային սիստեմ:

Կապիտալիզմի նեխումն առավել մեծ ուժով դրսևորվում է ժամանակակից իմպերիալիզմի զլխավոր երկրում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալը դրսևորում է սոկա արտադրողական ուժերն օգտագործելու բացահայտ անընդունակությունը: Կապիտալիստական աշխարհի այդ ամենահարուստ երկիրը դարձել է հատկապես զգալի խրոսիկական դործազրկության երկիր: Այնտեղ մշտական երևույթ է դարձել արդյունաբերության հարսնուն թերեհոսվածությունը: Չնայած ռազմական հատկացումների հսկայական ավելացմանը, որը կատարվում է աշխատավորների կենսամակարդակի իջեցման հաշիվին, հետպատերազմյան տարիներին արտադրության անի տեմպերը

դանդաղում են, հազիվ առաջ անցնելով բնակչության աճից: 1954—1960 թվականների ընթացքում ԱՄՆ-ի բնակչությունն աճել է 1,7 տոկոսով, իսկ արտադրությունը՝ 2,4 տոկոսով: Հետևաբար, այդ տարիներին բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքն աճել է ընդամենը 0,7 տոկոսով:

Ամերիկայի Միացյալ Նահանգները դարձել են առավել ալյանդակ ուղղմականացված էկոնոմիկայի երկիր: Պետական բյուջեի՝ 1961/62 բյուջետային տարվա նախագծով նախատեսված 80,9 մլրդ. դոլլարից 47,4 մլրդ. դոլլարը (բյուջեի 58 տոկոսը) հատկացվել է ուղղակի ուղղմական ծախսերին: ԱՄՆ-ի ֆեդերալ կառավարության բուրք գնումների 85 տոկոսը բաժին է ընկնում ուղղմական նյութերին:

Ավելի է խորանում նաև պիսավոր կապիտալիստական երկրների տնտեսական ու ռազարական զարգացման անհամաչափությունը, որը հասցնում է կապիտալիստական սիստեմում ուժերի հարաբերակցության փոփոխման: Եխա աճում է առանձին երկրների արդյունաբերության զարգացման տեմպերի տարբերությունը: Այդ մասին են վկայում հետևյալ թվերը՝.

Արդյունաբերական արտադրության զարգացման տեմպեր

Երկրներ	1955 թ. տոկոսներով	1959 թ. տոկոսներով
	1951 թ. նկատմամբ	1955 թ. նկատմամբ
ԱՄՆ	119,1	108,5
Անգլիա	115,4	107,1
Ֆրանսիա	103,4	102,4
Եսպանիա	123,4	115,5
ԳՖԽ	150,5	126,5
Իտալիա	136,3	131,6
Յարանիա	122,4	132,5
Ճապոնիա	150,6	179,3

Աղյուսակը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ը, Անգլիան և այլ երկրներ զարգանում են դանդաղ, նույնիսկ իջնուղի տեմպերով, իսկ Ճապոնիան, Ֆրանսիան և այլ երկրներ զարգանում են

քարձր տեմպերով: Զարգացման տեմպերի տարբերության շնորհիվ փոխվում է անտեսական ուժերի հարաբերությունը համաշխարհային կապիտալիստական սիստեմի ներսում: Իջնում է երկրների առաջին խմբի տեսակարար կշիռը համաշխարհային կապիտալիստական արդյունաբերական արտադրության մեջ, իսկ երկրների երկրորդ խմբինը աճում է: ԱՄՆ-ը այժմ նույնպես մտնում է որպես կապիտալիստական աշխարհի ամենահզոր արդյունաբերական երկիր, բայց նրա տնտեսական դիրքերն անշուրտ են թուլանում են: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ԱՄՆ-ի բաժինը կապիտալիստական արդյունաբերական արտադրության մեջ կազմում էր մոտավորապես 45 տոկոս, իսկ պատերազմի կազմում էր մոտավորապես 45 տոկոս, իսկ պատերազմի մտամնակ բարձրացավ և 1948 թվականին կազմեց մոտավորապես 56,4 տոկոս: Դրանից հետո այն անշեղորեն իջավ, 1957 թ. հասնելով 48,6, իսկ 1959 թ.՝ մոտավորապես 47 տոկոսի, և գնալով նվազում է:

Անգլիայի տեսակարար կշիռն ընկել է ինչպես 1948 թվականին, այնպես էլ նախպատերազմյան մակարդակի համեմատությամբ: Ընդհանրապես, այդ նույն ժամանակամիջոցում Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական երկրների տեսակարար կշիռը 29,6 տոկոսից աճել է 38 տոկոսի: Իր արտադրական պոտենցիալը վերականգնեց ձայտնիան:

Սակայն վերին տարիներում զգալիորեն դանդաղեցին արդյունաբերական աճի տեմպերը ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև կապիտալիստական Եվրոպայում: Այժմ արդեն ամբողջ համաշխարհային կապիտալիստական էկոնոմիկան կանգնած է նոր խոր ձգնաժամային ցնցումների անխուսափելիության առջև:

Ուժերի հարաբերակցության այդ փոփոխությունն ուժեղացրեց և ուժեղացնում է համաշխարհային կապիտալիստական շուկաների համար մղվող կոնկորենտության պայքարը իմպերիալիստական տերությունների միջև:

Իրենց մրցակիցների թուլացման շնորհիվ ԱՄՆ-ը նվաճել էր կապիտալիստական աշխարհի ապրանքների ամբողջ արտաձևման մոտավորապես 1/3-ը (32,5 տոկոս): Բայց այժմ

¹ Տե՛ս «Международная жизнь» ժուռնալը, 1961 թ., N 2, էջ 28:

այն կրճատվել է՝ 1959 թ. կազմեց միայն 17,4 տոկոս: Միաժամանակ աճել է աճում է այնպիսի երկրների տեսակարար կշիռը, ինչպիսիք են՝ ԳՅՌ-ն, Ճապոնիան, Ֆրանսիան, Իտալիան:

Անհրաժեշտ է նշել, որ մինչև մի որոշ ժամանակ զարգացած կապիտալիստական երկրների արտահանման տեսակարար կշիռն իջեցումը զուգակցվում էր արտահանման ֆիզիկական ծավալի ընդհանուր աճմամբ, իսկ մրցակցային պայքարի մեջ հիմնական կրոտարը կրում էին թույլ զարգացած երկրները: Դրուժյունն այնպիսին էր, որ թույլ զարգացած մի շարք երկրների արտահանման և՛ տեսակարար կշիռը, և՛ ֆիզիկական ծավալը կրճատվում էր: Բայց այժմ սկսել է այն ժամանակաշրջանը, երբ հիմնական զարգացած երկրները միջազգային շուկաներում բախում են միմյանց հետ երես առ երես և միջոց չէ, որ նրանց հաջողվում է իրենց միջև ծագած կոնֆլիկտները լուծել երրորդ անձերի հաշվին: Սրանով է հենց որոշվում մրցակցային պայքարի նոր էտապը՝ համաշխարհային շուկայում, սուր բախումների հաճախակի դառնալը զարգացած կապիտալիստական երկրների միջև: Որքան նեղանում է իմպերիալիստական տիրապետության դոբոթը, այնքան ուժգին կերպով են արսեղանում հակասությունները իմպերիալիստական տերությունների միջև:

Ենթակալան խորացող հակասություններից դուրս գալու համար կապիտալիստական երկրները դիմում են միջպետական կազմակերպությունների ստեղծմանը: Օրինակ, Եվրոպայում ստեղծվել է ԱՄՆ-ի ու պղծագետի կերպական միավորումը՝ «Էկոհանուր շուկա», «Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա» միջպետական միավորումները: Մասան, ինչպես նշվում է ՄՄԿՊ նոր Միագրում, շուկաների պլուրլիմի մեղմացման լուղուցի կերպ առաջացող միջպետական նոր կազմակերպություններն իրականում տանում են դեպի իմպերիալիստական երկրների հակասությունների ու նրանց պայքարի ուժեղացում, իրենցից ներկայացնում են կապիտալիստական խոշորագույն միությունների միջև համաշխարհային կապիտալիստական շուկայի բաժանման, իրենց

թույլ պարտիցորենների էկոնոմիկայի մեջ իմպերիալիստական ստավել ուժեղ պետությունների ներթափանցման նոր ձևեր: Միջազգային մոնոպոլիաների կազմավորումը, տարբեր կապիտալիստական երկրների խոշորագույն մոնոպոլիաների միջև համաձայնությունների կնքելը՝ համաշխարհային կապիտալիստական շուկայի բաժանման մասին, դերեր թաղաթականություն մասին, արտադրություն շափերի մասին, պայքարը նրանց միջև ու նրանց ներսում, կազմում են ժամանակակից կապիտալիզմի անկապտելի մասը:

Բարձր զարգացած կապիտալիստական երկրների մոնոպոլիստական օլիգարխիան, դաշինքի մեջ մտնելով ամերիկյան իմպերիալիզմի հետ, զոհարարում է իր երկրների սուվերենությունը, ընդամին հուսալով, որ ԱՄՆ-ի իմպերիալիստների աշակցությունները կհնչին սուվերիտետն ապագա ազատություններից, կխոչընդոտի սոցիալական պրոլետարի համար ժողովրդական մասսաների պայքարին: Եթե մի որևէ երկիր ղեկավարող իմպերիալիստական բուրժուազիան ի վիճակի չի լինում ինքնուրույն դիմադրավել զեմոկրատային և պրոլետարի անող ուժերին, ապա նա հինակետեր է որոնում ԱՄՆ-ի իմպերիալիստների մոտ: Իմպերիալիստները բազմա-քաղաքական դաշինքի մեջ են միավորվում ԱՄՆ-ի ղեկավարությամբ, որպեսզի համատեղ պայքարեն սոցիալիստական լազերի դեմ, իսկզին ազատ-ազատագրական, բանվորական ու սոցիալիստական շարժումները: Վերջին շրջանում ամերիկյան իմպերիալիզմն իր էքսպանսիան իրագործում էր կապիտալիզմի համաշխարհային սիստեմը վերկելու դրոշի տակ, իսկ կերպական աղբյուրներից իրենց հույսները դնում էին հենց ԱՄՆ-ի վրա և աշակցում նրան: Հենց նա է թույլ զարգացած երկրների վրա իմպերիալիստական պետությունների կուլեկտիվ հարձակումների կազմակերպման նախաձեռնողը: Նա է ժամանակակից նեոգաղութացման առաջնորդը: Հետևյալբար, ամերիկյան իմպերիալիզմը միաժամանակ համաշխարհային սեակցիայի ղեկավար հենարանն է ու միջազգային ժանդարմը, ամբողջ աշխարհի ժողովուրդների թշնամին:

Կապիտալիստական երկրների միջև հարաբերությունները ստեղծվում են ուժի միջոցով, կապիտալիզմը զորավորվում է Այդ կապիտալիզմի պատահական չէ, որ երկրների տնտեսական անհամաչափ զարգացման խորացումը և մրցակցային պայքարի ուժեղացումը տանում են դեպի ուղղմարզաբանական բլոկների կազմավորում: Ուժերի հարաբերակցության փոփոխությունները պահանջում են գոյություն ունեցող դաշինքների և համաձայնությունների փոփոխում: Խորացող հակասությունները բնականաբար տանում են իմպերիալիզմի լազերը և բարենպաստ պայմաններ ստեղծում խաղաղության, հասարակական պրոգրեսի, ղեկավարության և ազատության համար պայքարող բոլոր ուժերի համախմբման համար: Ժողովուրդներն ափելի ու ափելի վճռականորեն են պայքարի էլիտն իմպերիալիզմի դեմ:

Կապիտալիզմի բնոչանուր ճյուղամասի նոր էտապը նշանավորվում է նաև նրանով, որ իմպերիալիզմը կորցնում է միջազգային հարաբերությունների մեջ ունեցած իր վճռական դերը: Իմպերիալիզմի արտաբեր թաղարկանությունը խորացող ճգնաժամ է ապրում: Գա հետևանք է ոչ միայն իմպերիալիզմի Ներսում սրվող անտազոնիզմի, որը բնույթնում է իմպերիալիզմի լազերը, այլ նաև, ինչպես ցույց է տրվել, ինտերնացիոնալ կապերով կապված միասնական սոցիալիստական լազերի ուժերի աճման և իմպերիալիզմի շղթայից Աեիայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկուստարդ պետությունների անջատման և ինքնուրույն զարգացման: Էական նշանակություն ունի նույնպես կապիտալիստական երկրների պատակաւումը երկու խմբերի, որոնցից մեկն ընդգրկում է ուղղմական բլոկների մեջ մտած և զիպի համաշխարհային պատերազմ կողմնորոշվող պետություններին, իսկ մյուսն այն պետություններին, որոնք կանգնած են շեղորության դիրքերում և խաղաղություն են ցանկանում ու պայքարում նրա համար:

Իմպերիալիզմի միջազգային դիրքերի բնույթումը պարզորոշ արտահայտվում է նույնիսկ ՄԱԿ-ի զործնականության մեջ: Թեև իրական ուժերի հարաբերակցությունն այդ օրգա-

նում արտահայտվում է դեռևս ոչ լրիվ, որովհետև աշխարհի խոշորագույն պետությունը՝ ՉԺՌ-ն զեռևս չի զբաղեցրել իր օրինական տեղը, բայց այլևս նրանում անխափան չի գործում բովանդակության մեքենան, որ ստեղծվել և ղեկավարվում էր ԱՄՆ-ի կողմից: ՄԱԿ-ում ուժերի նոր հարաբերության ապացույց հանդիսացավ նրա Գլխավոր Ասամբլեայի կողմից բնոչանած ղեկարացիան՝ գաղութային երկրներին ու Ժողովուրդներին անկախություն տալու մասին: Այդ ղեկարացիան բնոչանակց այն պատճառով, որովհետև ՍՍՌՄ-ի և օտարիստական մյուս երկրների ցույցարեքած նախածնունդայն պաշտպանեցին աֆրիկա-ասիական երկրները:

Չնայած այն բանին, որ ԱՄՆ-ը մնում է իմպերիալիզմի լազերի սուաջատար ուղղմական ուժը, նրա թաղարկական ազդեցությունը կապիտալիստական աշխարհում բնույթնում է: Իմպերիալիստական սխառնի դիալոգը այդ ամբողջ աստիճանական բնույթումը կապիտալիզմի բնոչանուր ճգնաժամի խորացման արտահայտություններից մեկն է:

Համաշխարհային ասպարեքում ուժերի նոր հարաբերակցությունը սպասում է թաղարկական ղեկավարության համար մղվող պայքարին: Բայց միասնամանակ շարունակվում է հակաղեմոկրատական ու հակակոմունիստական տեղորոշ, անցում է կոստարվում բուրժուական ղեկավարությանց կառավարման ինքնակալական ու ֆաշիստական մեթոդներին: Այդ տեղեղները զղաջվում և յուրյիլք արտահայտվում է Իսպանիայում, Պորտուգալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Արևմտյան Գերմանիայում և այլ երկրներում: ԱՄՆ-ում պինդորականություն և ուղղմական կոնցրեռնների բունությունը այժմը ափելի շատ է զղաջվում, բան երբեկցել: Սա նույնպես բուրժուական ղեկավարության ճգնաժամի արտահայտությունն է:

Կապիտալիզմի բնոչանուր ճգնաժամի խորացման գրեվորումներից մեկն էլ բուրժուական գաղափարախոսություն ճգնաժամի սրումն է: Նույնիսկ իմպերիալիզմի շատագույնները տազնապի մեջ են այն բանի առթիվ, որ ժամանակակից կապիտալիզմն իր գաղափարական պլանում ոչ չէ՛ շուտի հարկապրելու մարքսիստական-լենինյան տեսությունը: Գա-

դափարախոտության բնագավառում բուրժուական տեսարանները միշտ էլ զրազվել են կեղծիրով, կապիտալիզմի շատագուրով։ Այսօր նրանք այդ բանը հասցրել են ժայռահեղուկանու Գա «Աղատ աշխարհ», «նեոկապիտալիզմի», «սոցիալիզմի» դեմոկրատական կապիտալիզմի», «ընդհանուր բարօրության պետության» մասին եղած շողակրատանքն է։

Մինչդեռ իրականում արդի կապիտալիզմի ամբողջ գազափարական պաշարը պարփակվում է այսպես կոչված հակալեռնիզմի մեջ։ Գազափարական այդ ալքատուլիզմը երևան է գալիս և այն բանում, որ նա չի կարողանում, անընդունակ է առաջ քաշելու հասարակության զարգացման որևէ պոզիտիվ ծրագիր։ Ապատակությունների մրցավազք, «սառը պատերազմ» և այն սաք պատերազմի վերածելու հեռանկար՝ ահա այն իրական նպատակը, որ հետապնդում է կապիտալիզմն ընդհանրապես, ամերիկյան իմպերիալիզմը՝ մասնավորապես։

Սոցիալիստական սխտեմի աճումն ու հզորացումը և կապիտալիստական սխտեմի անկումն ու քայքայումը միաժամանակ կոմունիստական զազափարախոտության աճում, հաստատում ու հողիկնակ և կապիտալիստական զազափարախոտության անկում և պարտուլիզմն է։ Կոմունիզմի իդեալները աստիճանաբար դառնում են համայն մարդկության սեփականությունը։

Հարց է առաջանում, թե ինչպի՞ս կարող է տեղի ունենալ համաշխարհային կապիտալիստական սխտեմից նոր երկրների անջատումը խաղաղ գոյակցության նպատաներում։

Իմպերիալիստական ռեակցիան,— ինչպես նշված է Խորհրդակցության հայտարարության մեջ,— ձգտելով անվստահություն առաջանել կոմունիստական շարժման և նրա զազափարախոտության նկատմամբ, չարունակում է աճարեկել մասսաներին, պնդելով, թե իբր կոմունիստներին միշտևտական պատերազմներ են հարկավոր կապիտալիստական

կարգերը ապավելու և սոցիալիստական կարգեր հաստատելու համար։

Մարքսիզմ-լենինիզմը միշտ էլ մերժել ու մերժում է բուրժուական այդ հերյուրանքը։ Այն փաստը, որ իմպերիալիստների կողմից սանձազերծած երկու համաշխարհային պատերազմներն ալաբալիցիյն սոցիալիստական ռեոլյուցիաներով բնավ չի նշանակում, թե սոցիալիստական ռեոլյուցիալի ուղին անպայման անցումն է համաշխարհային պատերազմով, հատկապես մեր դարաշրջանում, երբ գոյություն ունի սոցիալիզմի հզոր համաշխարհային սխտեմը։

Մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ այս կամ այն հասարակարգի բնարությունը ամեն մի ալյալ երկրի փոզովրդի սեփական իրավունքն է, որ սոցիալիստական ռեոլյուցիան չի արտահանվում և չի կարող պարտազրվել զրոսից և որ սոցիալիստական ռեոլյուցիան կապիտալիստական երկրների ներքին զարգացման, ներքին սոցիալական հակասությունների ժայռահեղ սրման արդյունքն է։

Խաղաղ պոյակցության պայմաններում սոցիալիստական նոր երկրների առաջնություն պրոցեսը չույնպես կապված է համաշխարհային կապիտալիստական սխտեմի ներքին հակասությունների խորացման, կապիտալիստական երկրների անտեսական ու քաղաքական անհամաշխարհային զարգացման օրենքի զործողության հետ։ Կապիտալիստական կարգերի տապալումը կիրազորվի այն երկրներում, որտեղ հակասությունները կհասնեն ամենատար սրտվյան։

Վ. Ի. Լենինը նշելով կապիտալիստական սխտեմի թուլացման և կապիտալիզմի շղթայի ճնշման պոզում պատերազմների նշանակությունը, միաժամանակ կանխատեսում էր այլ հնարավորություններ։ 1916 թ. նա գրում էր. «Սոցիալիստական ռեոլյուցիան կարող է բոցաղտուվել ո՞չ միայն խոշոր դարձողուլի կամ փոզոցային ցուլցի կամ սոլյալների բունտի կամ պիվոլրական ապստամբության կամ պոզովյային խոզովության պատահալով, այլև ուզածը քաղաքական կրիզիսից, ինչպես Գրեյֆուսի գործն էր կամ Ճարտոնի միջադեպը,

կամ հարստահարված ազգի անջատման հարցի հետ կապված հանրաքվեից է պլան՝:

Այստեղ կենինը խոսում է սոցիալիստական սեկուլյուցիայի իրականացման բազմաթիվ հնարավորությունների մասին, որոնք կապված չեն սազմական ցնցումների հետ:

Այժմ արգելն ակնառու կերպով ազդեցություն է ապացուցվում է մարքսիզմ-լենինիզմի այն ճշմարտությունը, որ սոցիալիստական սեկուլյուցիան բնավ էլ կազմված չէ պատերազմի հետ, որ կոմունիստներ խորթ է կողմնորոշվել դեպի համաշխարհային կամ այլ սեռական պատերազմը, որպես իր բազաբական նպատակին հասնելու միջոցի: Փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ վերջին տասնամյակում իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում կոմունիզմը աշխրհի բնկնող հաղթությունն է ձևար բերել ոչ թե պատերազմի պայմաններում, այլ սոցիալական տարրեր սխտեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցություն պայմաններում:

Պետությունների խաղաղ գոյակցությունը չէ նշանակում հրամարում դասակարգային պայքարից: Հասարակական տարրեր սխտեմ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը սոցիալիզմի է կապիտալիզմի միջև մղվող դասակարգային պայքարի մի ձև է: Խաղաղ գոյակցություն պայմաններում լայն հնարավորություններ են ստեղծվում կապիտալիստական երկրներում գոսակարգային պայքարի, իսկ գաղութային ու կախյալ երկրներում ազգային-ազատագրական շարժման ծավալման համար: Խաղաղ գոյակցություն բազաբականությունը ոչ թե կասեցնում է սեկուլյուցիան պրոլետարիատի վերելքը, այլ նպաստում է դրան, օգնում պրոլետարիատին իր շուրջը համախմբելու հասարակական լայն ուժերը: Այն սովորացնում է պրոլետարիատը դասակարգային գաշնակիցների շարքերը:

Խաղաղ գոյակցություն պայմաններում բուռն կերպով զարգանում են սոցիալիզմի առաջընթացական ուժերը և այդ անսանկի հաջողությունները խոր ազդեցություն են ունենում

կապիտալիստական աշխարհի աշխատավոր մասսաների վրա: Զարգացած կապիտալիստական երկրների բանվոր դասակարգն առաջնահարաբ գալիս է այն համոզմունքին, որ արտադրողական ուժերի գործադան ալվալ օրայմանն, լում սոցիալիզմը կյանքի անհամեմատ ալիքի բարձր մակարդակ է ապահովում, քան կապիտալիզմը:

Ընդհանուր և լրիվ դեմաթափման հարցը, որ սուաչ են բաշել սոցիալիստական երկրները, կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի է աշխատավորական մյուս խավերի ձևար է ալվա իրենց անմիջական կարիքների համար մղվող անսեռական ու քաղաքական պայքարի ծրագիր: Կապիտալիստական երկրներում աշխատավոր մասսաները մշտական պայքար են մղել սաղմական ծախսերի կրճատման և ազատվող միջոցների հաշվին իրենց կենսամոկարգակը բարելավելու համար: Իսկ այժմ դինաթափումը դարձել է մոդովրդական մասսաների մարտական պահանջը: Երբեք պահանջում են լրիվ դեմաթափում, որպեսզի խնայված միջոցներն ու ռեսուրսներն օրտադրվեն խաղաղ արտադրություն, բնակարանային շինարարություն, առողջապահություն, մոդովրդական կրթություն, սոցիալական ապահովության և այլ կարիքների համար:

Խաղաղության և դեմաթափման համար մղվող պայքարը միաժամանակ նպաստում է զարգացած կապիտալիստական երկրների աշխատավորական մասսաների աղտազգրմանը շովինիստական արամադրություններից, որոնք բուրժուադեմոկրատիայի կողմից արմատավորվում են ատոլը պատերազմի իրադրության մեջ, այսինքն՝ ամբարշտում է բանվորական շարժման միանությունը և բարձրացնում բանվոր դասակարգի ինտերնացիոնալիստական դեմակցությունը: Այն օգնում է մեկուսացնելու ախրապետող դասակարգի ամենանեակիցն և ինքն՝ ազգային մոնոպոլիաներին և դրանով իսկ նոր հնոսակարներ բացում դեմոկրատիայի հաղթանակի համար:

Ներկա պայմաններում խաղաղություն, դեմոկրատիայի, ազգային և սոցիալական իրավունքների համար մղվող պայքար

քորք կարող է մասսաներին ընդհուպ մոտեցնել ամենատար
սոցիալական վերափոխումների իրադրժմանը: Որչեկտիվ
նախադրյալներ են սանդժվում բանվոր դասակարգի շարքը
բնակչության մեծամասնության համախմբման համար, մի
շարք կապիտալիստական երկրներում զեպի սոցիալիզմ խա-
ղաղ անցում կատարելու համար:

ԹԻՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Կապիտալիզմի ընդհանուր նշխարների էությունը	2
Նշխարների առաջին էությունների համառոտ բնութագրերը	7
Ընդհանուր նշխարների նախ (երրորդ) էությունը	27
I	33
II	41
III	47

